

## **Վերականգնվեց Սյունիք գյուղական համայնքի ոռոգման ջրագիծը**

05.08.2015թ.

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանն այսօր «Սյունիքի մարզում ԵԱՀԿ ծրագրերի գրասենյակի» ղեկավար Ա. Շահբազյանի, Սյունիք և Աճանան գյուղական համայնքի ղեկավարների, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ռ. Ավետիսյանի, բնապահպանության բաժնի պետ Ա. Հարությունյանի և Կապանի «Օրիուս» բնապահպանական կենտրոնի ղեկավար Ա. Ավագյանի հետ այցելել է Սյունիք գյուղական համայնք, որտեղ ավարտվել են ոռոգման ջրագծի վերականգնման աշխատանքները:

Ջրագծի վերականգնումն իրականացվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհների ծրագրի» և «Սյունիքի մարզում ԵԱՀԿ ծրագրերի գրասենյակի» ծրագրի շրջանակում, որի նպատակն է մարզի Սյունիք և Աճանան գյուղական համայնքներում ոռոգման ջրագծերի վերանորոգման միջոցով հողերի դեգրադացիայի կանխարգելումն ու բնակչության անվտանգ գյուղմթերքի ապահովումը: Իրականացվել են 4 կմ ջրանցքի վերականգնման աշխատանքներ, որի արդյունքում ջրանցք է մտնում վարկյանում մոտ 240լ ջուր:

Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը կարևորել է ջրատարի վերանորոգումը և նշել, որ այն հնարավորություն կտա կանխելու ոռոգման նպատակով Արծվանիկի պոչամբարի ջրերի օգտագործումը:

Այցի ավարտին Կապանի «Օրիուս» բնապահպանական կենտրոնում տեղի ունեցավ քննարկում վերոնշյալ ծրագրերի հետագա համագործակցության վերաբերյալ:

